ուստի պետք է ենթադրել, որ եկվոր հայ ազգագրական շերտն այնքան բազմամարդ և հզել, որ ժամանակի ընթացքում մոռացնել է տվել սրանց տերմինը և գործածական դարձրել ծիթիհանք բառը, ինչպես դա կատարվել է այլ պատմա-ազգագրական շրջաններում ևս /հմմտ. Գեղարքունիքում XIX դ. երևանական թվականներից հետո նույն սրանցի վերափոխվելը ծիթխացով՝ դարձյալ որպես պատմա-ազգագրական կենցաղա-մշակութային շերտի արմատական վերափոխության անմիջական հետևանք/:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԸ ՈՐՊԵՍ ՎԻՊԱ-ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ

1. Հերոսները ծնվում են ժամանակի պահանջով: Ժամանակի պահանջով է ծնվել զորավար Անդրանիկը: Անդրանիկի իրական գործունեության շարժառիթները, իմաստն ու նպատակադրումը համընկնում է հայ ժողովրդի ազգային հասարակական իղձերին ու շահախնդրություններին, ինքն իրեն անհատականություն համապատասխանում է հերոսի վերաբերյալ ժողովրդի գաղափարական-բանաստեղծական չափանիշներին: Այդ է պատճառը, որ նա արդեն իր կենդանության օրոք բանահյուսական ստեղծագործությունների առաջացման ազդակ է հանդիսացել:

2. Անդրանիկի անվան շուրջ ստեղծված բանահյուսությունը գերազանցապես վիպական բնույթի է՝ երգեր ու զրույցներ: Ըստ վերջիններիի կերտվում է իրական պատմական անհատի վիպականացված հերոսական կերպարը, որին բնորոշ են հետևյալ գծերը: Ա. Հերոսն ունի ,,հրաշալի,, մանկություն, որով պայմանավորված է նրա հետագա կյանքը, նրա անխոցելիությունը: Նա մեծանում է ու հասակ է առնում առանց ծնողների: Որբ հերոսին խնամում ու դաստիարակում են քաջ, վեհանձն մարդիկ: Բ. Հերոսն իր ձին ստանում, ձեռք է բերում արտասովոր պարգևներում: Նա իր Անդրանիկ անունն ստանում է այս կամ այն ակնառու արարքի շնորհիվ, անհատական յուրովի վարքագծի համար: Գ. Հերոսի ու թշնամու հակամարտությունը բացահայտվում է, նրա պայքարն սկսվում է տնտեսական, հասարակական-քաղաքական բնույթի հանգամանքներում: Դ. Հերոսն օժտված է հայրենասիրությամբ՝ բառի լայն իմաստով: Իր համախոհ զինակիցների հետ միասին, ապավինած հայրենիքի անառիկ բնությանը, պայքարում է իր ժողովրդի ազատության համար: Նա խիզախ է ու քաջ: Իր սակավաթիվ զինվորներով մեծ կոտորած է ա-

նում թշնամու զորքերի մեջ: Թշնամին անգամ խոստովանում է ու գնահատում նրա հմուտ ռազմավարությունն ու անձնական խիզախությունը: Ե. Հերոսը պաշտպանում է ու հովանավորում բոլոր զրկվածներին, մնշվածներին, անկախ նրանց ազգությունից: Նա վեհանձն է, խիստ, արդարադատ, մեծահոգի ու ազնիվ: Ժշմարիտ բարեկամ է, նվիրված ու հավատարիմ ընկեր:

3. Անդրանիկի բանահյուսական կերպարի գոյության փաստը ցույց է տալիս, որ տակավին XIX - XX դդ. կենդանի ու կենսունակ էին հայ վիպական-հերոսական ավանդույթները:

ՅՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՄԵՋ

1. Բնա-էկոլոգիկ և սոցիոմշակութային գործոնների հարաբերակցության հարցը կաբևոր տեղ է բռնում պատմա-մշակութային ուսումնասիրություններում: Դրա մեթոդաբանական և տեսական էական նշանակությունը այն է, որ հարցի ճիշտ ընկալմամբ ու կիրառմամբ է մեծ մասամբ պայմանավորված մշակութային երևույթների և դրանց բազմազան ձևերի առաջացման, կիրարկման ու զարգացման մեխանիզմների իսկական գիտական ճանաչումը:

2. Սույն զեկուցման մեջ, հայոց անասնապահական տնտեսության օրինակով բացահայտվում են վերոհիշյալ գործոնների ազդեցության առանձնահատկությունները տարբեր բնա-էկոլոգիկ և սոցիոմշակութային պայմաններում, պատմական զարգացման տարբեր փուլերում:

3. Հայկական լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները, խիստ կտրտված ռելիեֆը և ուղղահայաց գոտիականությունը հնազույն շրջանից դրոշմ են դրել հողի գյուղատնտեսական յուրացման բնույթի վրա: Դրա էական գծերը դրսևորվում են տնտեսության կոմպլեքսայնությամբ, երկրագործության և անասնապահության հարաբերակցության տարածքային բազմազանությամբ, ինչպես նաև ընտանի կենդանիների տեսակների ու ցեղատեսակների արեալային տարբերություններով: Հայոց անասնապահական տնտեսության բնույթի մեջ ռեգիոնալ և ժամանակագրական նմանությունների ու տարբերությունների առաջացման պատճառների բացահայտումն անխուսափելիորեն պահանջում է բնա-էկոլոգիկ և սոցիոմշակութային գործոնների ազդեցության առանձնահատկությունների դիտարկում: